ՄԱԿ ՓԳՀ-ի՝ Իրաքի վերաբերյալ ուղեցույցի կիրառմանն աջակցելուն ուղղված՝ ծագման երկրի մասին համապատասխան տեղեկություններ

Իրաքցիների՝ ներքին վերաբնակեցման առաջարկվող տարածքներ օրինական կարգով մուտք գործելու և այդ տարածքներում տնական բնակություն հաստատելու կարողությունը

2022թ. նոյեմբեր

Այս փաստաթղթում որոշում կայացնողների համար ծագման երկրի մասին կոնկրետ տեղեկատվություն է պարունակվում այն իրաքցիների մուտքի և բնակության պահանջների վերաբերյալ, որոնք ցանկանում են արտերկրից վերադառնալ ոչ իրենց ծագման տարածք: Այս փաստաթղթի շրջանակում «ծագման տարածքը» սահմանվում է որպես այն տարածքը, որտեղ տրվել է անձի Քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը (ՔԿՆՔ) կամ Միասնական նույնականացման քարտը (ՄՆՔ):[1]

Այս փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը մուտքի և բնակության պահանջների վերաբերյալ այն տեղեկատվության թարմացված տարբերակն է (և այդպիսով փոխարինում է այդ տեղեկատվությանը), որը ներառված է 2021 թվականի հունվարի՝ *Ծագումով նախկինում Իրաքի և Լևանտի իսլամական պետության կողմից վերահսկվող կամ հակամարտությունից տուժած տարածքներից իրաքցիների՝ ներքին վերաբնակեցման առաջարկվող տարածքներ օրինական կարգով մուտք գործելու և այդ տարածքներում տնական բնակություն հաստատելու կարողության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցի կիրառմանն ուղղված՝ ծագման երկրի մասին համապատասխան*

[1] «Քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը և Իրաքի քաղաքացիության վկայականը 2016 թվականից աստիճանաբար փոխարինվում են միասնական նույնականացման քարտով. վերջինս կենսաչափական փաստաթուղթ է, որը ծառայում է և՛ որպես քաղաքացիության, և՛ ինքնության վկայական: Այնուամենայնիվ, միասնական նույնականացման քարտի ներմուծման գործընթացը տեղի է ունեցել մասնակի, հղի է վարչական և նյութատեխնիկական մարտահրավերներով և շարունակում է մնալ անհավասար ողջ երկրում»: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության գեկույց. Ինքնության իրավունք և քաղաքացիական փաստաթղթավորում, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջ 5: 2016 թվականի թիվ 3 օրենքը (Ազգային քարտի մասին օրենքը) սահմանում է ազգային քարտը (որը հայտնի է նաև որպես միասնական նույնականացման քարտ /ՄՆՔ) որպես «օրինականորեն հաստատված փաստաթուղթ, որը տրվում է Իրաքի քաղաքացուն՝ նույնականացնելու այն անձին, ում այն պատկանում է»: Իրաք, Ազգային քարտի մասին 2016թ. թիվ (3) օրենք, www.refworld.org/docid/635673494.html, Հոդված 1(7):

տեղեկատվության մեջ[2]: Այս փաստաթղթի շրջանակը ընդլայնվել է և ընդգրկում է ծագումով երկրի բոլոր մասերից այն իրաքցիների մուտքի և բնակության պահանջները, որոնց դեպքում կարող է դիտարկվել ներքին տեղափոխման կամ վերաբնակեցման այլընտրանքը (ՆՏԱ/ՆՎԱ), մինչդեռ նախկին փաստաթղթի ուշադրության կենտրոնում նրանք էին, ովքեր ծագումով Իրաքի և Ալ Շամի իսլամական պետության (այսուհետ՝ ԴԱԻՇ) կողմից նախկինում վերահսկվող կամ հակամարտության հետևանքով այլ կերպ տուժած տարածքներից էին:

Բացի այդ, այս փաստաթուղթը մանրակրկիտ տեղեկություններ է տրամադրում կացության քարտի (ռեզիդենտ քարտ) վերաբերյալ, որը պաշտոնական փաստաթուղթ է, որը հաստատում է անձի կացության կամ բնակության վայրը, այն է՝ թե որն է անձի մշտական տունը[3]: 2014 թվականից հետո Իրաքում տեղի ունեցած լայնամասշտաբ ներքին տեղահանման ընթացքում ՄԱԿ ՓԳՀ-ի ուշադրության կենտրոնում իրաքցիների՝ համապատասխան տեղական մարմինների և անվտանգության ուժերի միջոցով վերաբնակեցման տարածքում իրենց կացությունն ապահովելու կարողությունն էր: Ինչևէ, հաշվի առնելով, որ Դաշնային կառավարության ուշադրության կենտրոնում ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ-ների) վերադարձը և Դաշնային Իրաքում բոլոր ՆՏԱ ճամբարների փակումն է, բացի մեկից[4]՝ այս

[2] ՄԱԿ ՓԳՀ, Իրաք. Իրաքի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցի կիրառմանն ուղղված ծագման երկրի մասին համապատասխան տեղեկություններ՝ ծագումով Իրաքի և Լևանտի իսլամական պետության կողմից նախկինում վերահսկվող կամ հակամարտությունից տուժած տարածքներից իրաքցիների՝ ներքին վերաբնակեցման առաջարկվող տարածքներ օրինական կերպով մուտք գործելու և այդ տարածքներում տնական բնակություն հաստատելու կարողության վերաբերյալ, 11 հունվարի 2021թ., www.refworld.org/docid/5ffc243b4.html:

[3] Կացության քարտը (արաբերեն՝ bitaqa al-sakan, بطاقة السكن) պաշտոնական փաստաթուղթ է, որը ցույց է տալիս այն հասցեն, որտեղ տնային տնտեսության ղեկավարը վարձակալում է կամ ունի բնակարան: Կացության քարտի տրամադրման համար պատասխանատու է Ներքին գործերի նախարարության քաղաքացիության հարցերով գլխավոր վարչությունը: Այն օգտագործվում է ինչպես Դաշնային Իրաքում, այնպես էլ Իրաքյան Քուրդիստանի (ԻՔ) տարածքում: 1978 թվականի թիվ 95 օրենքը սահմանում է կացարանը և բնակության վայրը որպես «վայր, որտեղ խնդրո առարկա անձը սովորաբար գտնվում կամ բնակվում է»: Իրաք, 1978 թվականի թիվ 95 օրենք, Իրաքի տարածքում կացության և բնակության վայրերի կազմակերպում, 1978 թվականի դեկտեմբերի 6, www.refworld.org/docid/3ae6b4ec3c.html, Հոդված 1(3):

[4] Դաշնային Իրաքում մի շարք ճամբարների փակումից հետո միայն մեկ ճամբար՝ Քայյարա շրջանում գտնվող Ջիդդա 5 ճամբարն է (Նինվեի նահանգ) շարունակում մնալ բաց Դաշնային կառավարության կողմից կառավարվող տարածքներում: Դաշնային կառավարությունը մտադրություն է հայտնել փակել նաև Ջիդդա 5 ճամբարը: Բացի այդ, կան 25 ճամբարներ, որոնք տեղակայված են Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության (ՔՏԿ) վերահսկողության տակ գտնվող տարածքներում, այդ թվում՝ վիճելի շրջաններում, հիմնականում Դոհուկի նահանգում (11), որին հաջորդում են Նինվեի (7), Էրբիլի (3), Սուլեյմանիայի (3) և Դիյալայի նահանգները (1): Ճամբարներն են. Դոհուկ՝ Բերսևե 1, Բերսևե 2, Չամիշկու, Դարկար, Դավադիա, Կաբարտո 1, Կաբարտո 2, Խանկե, Բաջեթ Կանդալա, Ռուանգայի համայնք և Շարիյա; Նինվե՝ (Դոհուկի կամ Էրբիլի վարչակազմի ներքո)՝ Էսյան, Մամիլյան, Մամրաշան, Շեյխան, Հասանշամ ՅՈւ2, Հասանշամ ՅՈւ3, Խազեր Մ1; Էրբիլ՝ Բահարկա, Հարշմ, Դեբագա 1; Սուլեյմանիա՝ Թազադե, Արբաթ ՆՏԱ, Աշտիի ՆՏԱ; Դիյալա (Սուլեյմանիայի վարչակազմի ներքո)՝ Քորատու: 2022 թվականի սեպտեմբերի դրությամբ մոտ 180,000 ներքին տեղահանված անձ կամ ներքին տեղահանված անձանց ընդհանուր բնակչության 15 տոկոսը շարունակում են մնալ ճամբարներում: Իրաքի Ճամբարների համակարգման և կառավարման խումբ, 2022թ. սեպտեմբեր, https://data2.unhcr.org/en/situations/iraq_cccm: Քուրդիստանի

փաստաթուղթը նկարագրում է վերաբնակեցման առաջարկվող տարածքում իրաքցիների՝ մշտական բնակություն հաստատելու ավելի ընդհանուր պայմանները:[5] Այս առումով խիստ կարևոր է կացության քարտը, այդ թվում՝ այն իմաստով, որ այն քարտի տիրոջը բոլոր իրավունքներից և հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորություն է տալիս: Այս փաստաթղթում նաև նկարագրված են կացության քարտը նոր տարածք փոխանցելուն/նոր տարածքում տրամադրելուն առնչվող սահմանափակումները՝ կախված անձի ծագման վայրից, էթնիկ կամ կրոնական պատկանելությունից, սեռից կամ անձնական կարգավիճակից:

Այս փաստաթուղթը նախատեսված չէ որպես համապարփակ ուղեցույց ներքին տեղափոխման այլընտրանքի/ներքին վերաբնակեցման այլընտրանքի գնահատման վերաբերյալ, որը ներառում է առաջարկվող ներքին տեղափոխման այլընտրանքի/ներքին վերաբնակեցման այլընտրանքի նպատակահարմարության և ողջամտության գնահատում[6]: Փոխարենը, այս փաստաթուղթը միայն փաստական տեղեկություններ է պարունակում այն գրելու պահի դրությամբ գործող մուտքի և բնակության պահանջների վերաբերյալ: Այս փաստաթղթում պարունակվող տեղեկությունները հավաքագրվել և ստուգվել են ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից: Տեղեկությունները արտացոլում են 2022 թվականի նոյեմբերի դրությամբ առկա իրավիճակը:

Իրաքում մուտքի և բնակության պահանջները կարգավորող օրենսդրական շրջանակը բարդ է և ենթակա է իրավական բազմակարծության: Ավելին, գոյություն ունեցող պրակտիկան ոչ միշտ է համապատասխանում նորմատիվ շրջանակին և տարբերվում է ըստ վայրի ու այն կիրառող մարմնի: Հովանավորությանն ու թույլտվությանն առնչվող այլ պահանջներ օրենքով սահմանված չեն և պաշտոնապես հայտարարված չեն: Հաշվի առնելով Իրաքի այլ հատվածներում մուտքին ու բնակությանն առնչվող պրակտիկայի և իրավակարգավորումների հնարավոր փոփոխությունները՝ որոշում կայացնողները պետք է ստուգեն տեղեկատվության ճշտությունը որոշում կայացնելու պահի

տարածաշրջանային կառավարությունը մտադրություն է հայտնել կանխատեսելի ապագայում բաց պահել ճամբարները: ՄԱԿ-ի հումանիտար գործերի համակարգման գրասենյակ, Իրաք. Մարդասիրական տեղեկագիր, 2021թ. նոյեմբեր-դեկտեմբեր, 17 հունվարի 2022թ., https://bit.ly/3QyxseB, էջ. 2:

[5] «*Առաջարկվող տարածքը պետք է լինի նաև օրինական կերպով հասանելի, այսինքն՝ անձը պետք է իրավունք ունենա օրինական կարգով ճանապարհորդել, մուտք գործել և մնալ այնտեղ*» (ընդգծումն ավելացված է): ՄԱԿ ՓԳՀ, Միջազգային պաշտպանության մասին թիվ 4 ուղեցույց. «Ներքին տեղափոխման կամ վերաբնակեցման այլընտրանքը» Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի Կոնվենցիայի հոդված 1Ա(2)-ի և/կամ դրա 1967 թվականի արձանագրության համատեքստում, 2003 թվականի հուլիսի 23, www.refworld.org/docid/3f2791a44.html, պարբ. 12:

[6] Հետագա ուղղորդում է տրամադրվում Իրաքի Հանրապետությունից փախչող անձանց առնչվող՝ 2019 թվականի միջազգային պաշտպանության նկատառումներում, որը ժամանակին թարմացվելու է: ՄԱԿ ՓԳՀ, Իրաքի Հանրապետությունից փախչող անձանց առնչվող միջազգային պաշտպանության նկատառումներ, 2019թ. մայիս, www.refworld.org/docid/5cc9b20c4.html, էջ 116-126:

դրությամբ: ՄԱԿ ՓԳՀ-ն մտադիր է ըստ անհրաժեշտության թարմացնել այս փաստաթուղթը:

Բովանդակություն

I. Ընդհանուր տեղեկություններ 7

II. Մուտքի պահանջներ 7

Ա. Դաշնային Իրաք 7

1) Նահանգներ, որտեղ չեն գործում հովանավորության պահանջներ 8

2) Նահանգներ, որտեղ գործում են հովանավորության պահանջներ 8

Բ. Իրաքի Քուրդիստանի շրջան (ԻՔՇ) 9

1) Դոհուկի նահանգ 9

2) Էրբիլի նահանգ 10

3) Սուլեյմանիայի նահանգ 11

III. Բնակության պահանջներ 12

Ա. Ժամանակավոր կացություն 12

1) Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը 14

2) Կացության քարտի փոխանցման/ձեռքբերման խոչընդոտները 17

3) Նոր վայրում տրված կացության քարտ չունենալու հետևանքները 18

IV. Բնակության վերաբերյալ նահանգային պահանջները 20

Ա. Կենտրոնական և Հարավային Իրաք 20

1) Բաղդադի նահանգ 20

2) Դիյալայի նահանգ 22

3) Քիրքուկ քաղաք 23

4) Մոսուլ քաղաք 24

5) Հարավային նահանգներ 25

Բ. Իրաքի Քուրդիստանի Շրջան (ԻՔՇ) 26

1) Դոհուկի նահանգ 26

2) Էրբիլի նահանգ 29

3) Սուլեյմանիայի նահանգ 31

Հապավումների և տերմինների ցանկ

Ասայիշ	Քրդական անվտանգության գործակալություն
ՔԿՆՔ	Քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտ
ՀԲՀ	Հանրային բաշխման համակարգ
ՆՏԱ	Ներքին տեղահանված անձ
ՆՏԱ/ՆՎԱ	Ներքին տեղափոխման կամ վերաբնակեցման այլընտրանք
ԻԼԻՊ	Իրաքի և Լևանտի իսլամական պետություն
ՔՇԿ	Քուրդիստանի շրջանային կառավարություն
ԻՔՇ	Իրաքի Քուրդիստանի Շրջան
Մուխթար	Տեղական կառավարման մարմնի ղեկավար
ՄՆՔ	Միասնական նույնականացման քարտ

I. Ընդհանուր տեղեկություններ

2014-2017 թվականներին ԴԱԻՇ-ի ապստամբության և դրան հաջորդած հակադաիշական ռազմական գործողությունների հետևանքով մարդկանց լայնածավալ տեղահանման պայմաններում բազմաթիվ տեղական մարմիններ մուտքի և բնակության խիստ սահմանափակումներ մտցրին, այդ թվում՝ հովանավորության պահանջներ, մինչդեռ որոշ տարածքներում ընդունվեցին հակամարտությունից տուժած տարածքներից փախչող անձանց, հատկապես՝ սուննի արաբների մուտքի գրեթե ամբողջական արգելքներ[7]: 2017 թվականին ԴԱԻՇ-ից տարածքը հետ գրավելուց և խմբավորման նկատմամբ Իրաքի կառավարության հայտարարած հաղթանակից հետո մուտքի և բնակության սահմանափակումները կա՛մ աստիճանաբար հանվել են, կա՛մ մեղմացվել: Ինչևէ, կախված անձի բնութագրից և ծագման վայրից, փաստաթղթերի առկայությունից և վերաբնակեցման վայրում ունեցած կապերից, մուտքի և բնակության սահմանափակումները շարունակում են խոչընդոտել անձանց՝ վերաբնակվելու և վերաբնակեցման վայրում տնական բնակություն հաստատելու կարողությանը, այդ թվում՝ իրավունքներից և հիմնական ծառայություններից օգտվելու առումով:

II. Մուտքի պահանջներ

Ա. Դաշնային Իրաք

Որպեսզի անձը կարողանա հատել սահմանի անցման կետը և մուտք գործել վերաբնակեցման տարածք, նա պետք է ունենա վավերական փաստաթղթեր (ինչպես օրինակ՝ քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտ/միասնական նույնականացման քարտ, քաղաքացիության վկայական կամ անձնագիր)[8]:

[7] Ի տարբերություն քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտի (ՔԿՆՔ)՝ միասնական նույնականացման քարտում այլևս չի նշվում քարտի տիրոջ կրոնը: Գործնականում անձի անունը, ծագման վայրը, առոգանությունը և հագուստը հավանական է, որ շատ դեպքերում մատնեն նրա էթնիկ/կրոնական/ցեղային պատկանելությունը: Անհրաժեշտության դեպքում իշխանությունները նաև կարող են պահանջել լրացուցիչ փաստաթղթեր (օրինակ՝ քաղաքացիության վկայական), որոնցում նշվում է քարտի տիրոջ կրոնը:

[8] «Ինքնությունը հաստատող փաստաթղթեր են հաճախ պահանջվում նաև սահմանային անցակետերով անցնելու համար. առանց փաստաթղթերի՝ էապես աճում է կամայական կալանավորման և ձերբակալման վտանգը»: Փախստականների դանիական խորհուրդ (ՓԴԽ) և այլք, *Կյանքը լուսանցքում. Հակամարտությունից հետո Իրաքի՝ փաստաթղթեր չունեցող անձանց կարիքների վերագնահատում*, 14 սեպտեմբերի 2022թ., https://bit.ly/3S7TeWU, էջ 14: «Առանց ինքնությունը հաստատող փաստաթղթերի, ներքին տեղահանվածների և վերադարձողների ֆիզիկական անվտանգությունը վտանգված է պոտենցիալ կամայական ձերբակալությունների և կալանավորման, անցակետերում իրավունքների խախտման և ազատ տեղաշարժի սահմանափակման պատճառով»: ՄԱԿ-ի հումանիտար գործերի համակարգման գրասենյակ, 2022թ. Հումանիտար կարիքների ուսումնասիրություն. Իրաք,

Նահանգների, շրջանային և քաղաքային անցակետերում շարունակում են իրականացվել անվտանգության նպատակով կատարվող ստուգումներ:
Բացի այդ, որոշ տարածքներում շարունակում են գործել հովանավորության պահանջները: Սա գործնականում նշանակում է, որ անձը պետք է վերաբնակեցման առաջարկվող տարածքում որևէ ծանոթ ունենա, որը այդ տարածքի բնակիչ է և համաձայն է հանդես գալ որպես հովանավոր՝ երաշխավորելով, որ անձը անվտանգությանը չի սպառնում:

1) Նահանգներ, որտեղ չեն գործում հովանավորության պահանջներ

Դաշնային կառավարության վերահսկողության տակ գտնվող նահանգների/շրջանների մեծ մասում չեն գործում մուտքի պահանջներ: Դրանց թվում են Ալ-Անբարի, Բաբիլի, Բաղդադի, Բասրայի, Դհի-Քարի (բացառություններով), Դիյալայի (բացառություններով), Քերբալայի, Քիրքուկի, Միսսանի, Մութհաննայի, Նաջեֆի, Նինվեի (բացառություններով), Քադիսսիայի և Վասսիթի նահանգները:

2) Նահանգներ, որտեղ գործում են հովանավորության պահանջներ

Որոշ տարածքներ մուտք գործելու համար հարկավոր է հովանավոր/երաշխավոր այդ տարածքից, որը պետք է դիմավորի անձին նահանգի անցակետում.

- Դհի-Քարի նահանգ՝ քաղաք Նասիրիյահ,
- Դիյալայի նահանգ՝ Մուքդադիյահի շրջանի հյուսիսային գյուղեր, Խանաքինի շրջանի Սաադիյահի ենթաշրջանի գյուղեր և Խալիս շրջանի Ալ-Ուդհիմ ենթաշրջանի հյուսիսում գտնվող գյուղեր (Սալահ Ալ-Դին նահանգի սահմանին): Այս տարածքներ մուտք գործել ցանկացող՝ Իրաքի այլ մասերից եկած անձանցից, ինչպես նաև նրանց հովանավորներից պահանջվում է շրջանի մուտքի անցակետում հանձնել իրենց նույնականացման քարտերը և թույլատրվում է դրանք հետ վերցնել հեռանալու ժամանակ:
- Նինվեի նահանգ՝ խառը էթնիկ պատկանելություն ունեցող տարածքներ, այդ թվում՝ Թալ Աֆարի, Համդանիյահի և Սինջարի շրջաններ[9]:

2022թ. մարտ, www.ecoi.net/en/document/2070137.html, էջ. 28. «Քաղաքացիական կացության վկայականը ցույց տալու անհրաժեշտությունը անցակետերով անցնելու համար նշվում է որպես տուժած անձանց ազատ տեղաշարժի երկրորդ հիմնական խոչընդոտ (...) Ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայությունն ուղղակիորեն մեծացնում է շահագրգիռ անձանց՝ պաշտպանության այլ լուրջ միջադեպերի և իրավունքների ոտնահարման վտանգը, հատկապես այն անցակետերում, որտեղ աշխատում են զինված և անվտանգության դերակատարներ»: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության զեկույց. Ինքնության իրավունք և քաղաքացիական փաստաթղթավորում, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջեր 6, 11:

[9] ՄԱԿ ՓԳՀ-ի տեղեկատվություն, 2022թ. նոյեմբեր:

Միայն համապատասխան տարածքի կողմից տրված կացության քարտ ունեցող և այդ տարածքում բնակվող անձինք կարող են հանդես գալ որպես հովանավոր:

Բ. Իրաքի Քուրդիստանի շրջան (ԻՔՇ)

1) Դոհուկի նահանգ

ա) Իրաքցիներ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են

Այն իրաքցիները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են, որպես կանոն, կարող են առանց սահմանափակումների մուտք գործել Դոհուկի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը:

բ) Իրաքցիներ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն

Անձանց, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, մուտքի անցակետում անվտանգության սուտգումն անցնելուց հետո տրվելու է Ասայիշի կողմից տրված ժամանակավոր մուտքի թույլտվություն («Անվտանգության երաշխավորման քարտ»), որն ունի 30 օրվա վավերականության ժամկետ[10]: Այս մուտքի թույլտվությունը տրվում է բուժման, աշխատանքի, առևտրի նպատակներով կամ նմանատիպ այլ պատճառներով իրականացվող կարճաժամկետ այցերի համար: Այն թույլ է տալիս մուտք գործել և թույլտվության վավերականության ժամկետի ընթացքում մնալ Դոհուկի նահանգում: Դոհուկում 30 օրից ավել մնալու համար նրանք պետք է դիմեն այն թաղամասի Ասայիշին և մուխթարին (տեղական կառավարման մարմնի ղեկավարին), որտեղ ցանկանում եմ օրինականացնել իրենց կացությունը (տե՛ս Բաժին IV.Բ.1):

[10] Էրբիլում տրված «Անվտանգության երաշխավորման քարտ» ունեցող անձանց թույլատրվում է մուտք գործել Դոհուկ՝ առանց անցակետում նոր «Անվտանգության երաշխավորման քարտ»-ի տրամադրման: Նրանք կարող են հետագայում Դոհուկում ստանալ «Անվտանգության երաշխավորման քարտ»՝ տրված Դոհուկի Ասայիշի կողմից. ՄԱԿ ՓԳՀ-ի տեղեկատվություն, նոյեմբեր 2022թ.:

2) Էրբիլի նահանգ

ա) Իրաքցիներ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են

Այն իրաքցիները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են, որպես կանոն, կարող են առանց սահմանափակումների մուտք գործել Էրբիլի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը:

բ) Արաբներ և թուրքմեններ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

Իրաքցի արաբները և թուրքմենները, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն և մուտք են գործում Էրբիլի միջազգային օդանավակայանով, պետք է դիմեն Ասայիշին մուտք գործելուց հետո 48 ժամվա ընթացքում, եթե մտադիր են այս նախնական ժամկետից ավելի երկար մնալու (տես Բաժին IV.Բ.2):

Ցամաքային անցակետերով մուտք գործող անձանց Ասայիշի կողմից տրվում է ժամանակավոր մուտքի թույլտվություն («Անվտանգության երաշխավորման քարտ»), որն ունի 30 օրվա վավերականության ժամկետ[11]: Այս մուտքի թույլտվությունը տրվում է բուժման, աշխատանքի, առևտրի նպատակներով կամ նմանատիպ այլ պատճառներով իրականացվող կարճաժամկետ այցերի համար: Էրբիլում 30 օրից ավելի մնալու համար նրանք պետք է դիմեն Ասայիշին այն թաղամասում, որտեղ մտադիր են բնակվել, որպեսզի օրինականացնեն իրենց կացությունը Ասայիշի և մուխթարի միջոցով (տես Բաժին IV.Բ. 2):

գ) Քրդեր, քրիստոնյաներ, եզդիներ և ծագումով ոչ Իրաքի Քուրդիստանից այլ փոքրամասնությունների անդամներ

Փոքրամասնությունների ներկայացուցիչները, որոնք ծագումով ո՛չ արաբ են, ո՛չ թուրքմեն և Իրաքի Քուրդիստանից չեն, կարող են առանց սահմանափակումների մուտք գործել Էրբիլի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը:

[11] Դոհուկում տրված «Անվտանգության երաշխավորման քարտ» ունեցող անձանց թույլատրվում է մուտք գործել Էրբիլ՝ առանց անցակետում նոր «Անվտանգության երաշխավորման քարտ»-ի տրամադրման: Նրանք կարող են հետագայում Էրբիլում ստանալ «Անվտանգության երաշխավորման քարտ»՝ տրված Էրբիլի Ասայիշի կողմից. ՄԱԿ ՓԳՀ-ի տեղեկատվություն, նոյեմբեր 2022թ.:

3) Սուլեյմանիայի նահանգ

ա) Իրաքցիներ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են

Այն իրաքցիները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են, որպես կանոն, կարող են առանց սահմանափակումների մուտք գործել Սուլեյմանիայի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը:

բ) Արաբներ և թուրքմեններ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն

Իրաքցի արաբներն ու թուրքմենները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն, ներքին սահմանին (ոչ օդանավակայանում) անվտանգության ստուգումն անցնելուց հետո ստանում են Ասայիշի կողմից տրված մուտքի թույլտվություն, որն ունի 30 օրվա վավերականության ժամկետ: Այս մուտքի թույլտվությունը տրվում է կարճաժամկետ այցերի համար (բուժման, աշխատանքի, առևտրի նպատակներով կամ նմանատիպ այլ նպատակներով) և Սուլեյմանիայի նահանգ մուտք գործելու և թույլտվության վավերականության ժամկետի ընթացքում այնտեղ մնալու հնարավորություն է տալիս: Նման մուտքի թույլտվություն ունեցողները բնակարան վարձելու կամ կանոնավոր աշխատանքի իրավունք չունեն: Ինչևէ, նրանք կարող են հյուրանոցում սենյակ վարձել: Սուլեյմանիայում 30 օրից ավելի մնալու համար նրանք պետք է դիմեն Ասայիշին և մուխթարին այն թաղամասում, որտեղ ցանկանում են բնակվել (կոնկրետ ժամկետ սահմանված չէ):

Այն անձինք, որոնք նահանգ են ժամանում Սուլեյմանիայի օդանավակայանով, չեն ստանում «Զբոսաշրջիկ-այցելուի քարտ»: Եթե նրանք ցանկանում են բնակություն հաստատել Սուլեյմանիայի նահանգում, նրանք պետք է դիմեն Ասայիշին և մուխթարին այն թաղամասում, որտեղ ցանկանում եմ բնակվել (տես Բաժին IV.Բ.3):

գ) Քրդեր ու եզդիներ, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն

Իրաքցի քրդերին, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն, թույլատրվում է առանց սահմանափակումների մուտք գործել Սուլեյմանիայի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը: Գործնականում եզդիներին, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն, վերաբերվում են նույն կերպ, ինչպես քրդերին, և նրանք կարող են մուտք գործել

Սուլեյմանիայի նահանգ՝ ներկայացնելով իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը:

III. Բնակության պահանջներ

Այս գլխում մանրամասն ներկայացված են այն իրաքցիներին վերաբերող բնակության պահանջները, որոնք ցանկանում են բնակվել ոչ իրենց ծագման նահանգում (սա վերաբերում է նաև այն անձանց, որոնք Իրաք են վերադարձել երրորդ երկրից)[12]:

Ա. Ժամանակավոր կացություն

Նոր վայրում օրինական կարգով ժամանակավոր բնակություն հաստատելու համար[13] պահանջվում են ինքնությունը հաստատող վավերական փաստաթղթեր (քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտ, քաղաքացիության վկայական, միասնական նույնականացման քարտ): Կորած կամ ժամկետը լրացած նույնականացման փաստաթղթերի վերաթողարկման համար, որպես կանոն, պահանջվում է, որ անձը վերադառնա ծագման վայր[14]: Բացի այդ, պահանջվում է համապատասխան տեղական կառավարման մարմնի, ինչպես օրինակ՝ մուխթարի (կամ տեղական խորհրդի կամ քաղաքապետի) հաստատումը (հաստատման/երաշխավորման/աջակցության նամակի միջոցով)՝ կախված տարածքից[15]: Մի շարք նահանգներում և քաղաքներում (Բաղդադ, Դիյալա, Դոհուկ և

[12] Այս գործընթացները սովորաբար պետք արվեն անձամբ և Իրաքում, դրանք չեն կարող կատարվել արտասահմանում:

[13] «Ազգային քարտի մասին» 2016 թվականի թիվ 3 օրենքը սահմանում է ժամանակավոր կացությունը որպես բնակության վայր, որտեղ Իրաքի քաղաքացին կարող է մնալ ոչ ավել, քան երեսուն օր ժամկետով (սոցիալական այցերի և այլ տեղաշարժերի ընթացքում)՝ մշտական բնակության վայր վերադառնալու մտադրությամբ»; Իրաք, Ազգային քարտի մասին 2016թ. թիվ (3) օրենք, www.refworld.org/docid/635673494.html, Հոդված 1, պարբ. (32):

[14] Տեղահանված անձանց համար «քաղաքացիական փաստաթղթեր ստանալու խոչընդոտ է իշխանությունների կողմից դրված այն պահանջը, ըստ որի՝ Քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտի, Իրաքի քաղաքացիության վկայականի և Միասնական նույնականացման քարտի համար դիմումները պետք է ներկայացվեն իրենց ծագման վայրերում և անձամբ: (...) Այնուամենայնիվ, առանց անձը հաստատող փաստաթղթերի և/կամ անվտանգության մարմինների թույլտվության, ներքին տեղահանված անձինք հաճախ չեն կարողանում վերադառնալ իրենց ծագման վայրեր՝ իրենց ազատ տեղաշարժի տարբեր սահմանափակումների և անցակետերում կամայական ձերբակալման վտանգի պատճառով: (...) Ավելին, դատարանները և Քաղաքացիական գործերի տնօրինության գրասենյակները սովորաբար թույլ չեն տալիս փաստաբաններին փաստաթղթեր ստանալ իրենց հաճախորդների փոխարեն լիազորագրի միջոցով, որը թույլ կտար գործը վարել առանց հաճախորդի ներկայության»: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության զեկույց. Ինքնության քաղաքացիական փաստաթղթերի իրավունք, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջ 6-7: Նույն պահանջը որոշ դեպքերում կիրառվում է նաև ծննդյան վկայականների տրամադրման դեպքում. տես նույն զեկույցի էջ 6-ը:

[15] Սովորաբար տարածքի առաջին վարչական օղակը՝ սովորաբար մուխթարը, կամ, եթե չկա մուխթար, տեղական խորհուրդը: Որոշ գյուղական վայրերում առաջին վարչական օղակը կարող է լինել ենթաշրջանի կամ շրջանի քաղաքապետը:

բոլոր հարավային նահանգներում[16]), տեղական մարմինների կողմից պահանջվում է հովանավոր (Բաղդադում՝ երկու հովանավոր): Բացի այդ, որպես կանոն, բոլոր տարածքներում համապատասխան անվտանգության գործակալությունների կողմից անվտանգության թույլտվություններ են անհրաժեշտ՝ անկախ անձի բնութագրից/ծագումից: Սուննի արաբները և սուննի թուրքմենները, որոնք նախկինում ԴԱԻՇ-ի կողմից վերահսկվող կամ հակամարտությունից տուժած տարածքներից են, կարող են հատկապես մանրակրկիտ ստուգումների ենթարկվել և անվտանգության թույլտվություն չստանալ կամ ենթարկվել 2005 թվականի Հակաահաբեկչական օրենքով սահմանված կամայական ձերբակալման և կալանավորման վտանգին (2005 թվականի թիվ 13 օրենք)՝ լայն և խտրական պրոֆիլավորման հիմքով[17]:

Բ. Մշտական բնակություն[18]

Չնայած իրաքցիները կարող են ժամանակավոր կերպով օրինականացնել իրենց կացությունը՝ գրանցվելով տեղական մարմիններում և անվտանգության մարմիններում, միայն նոր վայրում տրված կացության քարտն է երաշխավորում, որ անձը/ընտանիքը կարող է մշտական բնակություն հաստատել[19] և նոր վայրում լիարժեք կերպով օգտվել իրավունքներից և հիմնական ծառայություններից, այդ թվում՝

[16] Սույն փաստաթղթում Բաբիլի, Բասրայի, Դհի-Քարի, Քերբալայի, Միսանի, Մութաննայի, Նաջեֆի, Քադիսիյայի և Վասսիթի նահանգները նշվում են որպես «Հարավային Իրաք»:

[17] ՄԱԿ ՓԳՀ, Իրաքի Հանրապետությունից փախչող անձանց միջազգային պաշտպանությանն առնչվող նկատառումներ, 2019թ. մայիս, www.refworld.org/docid/5cc9b20c4.html, էջ 30-39, 59-65 (և դրանում պարունակվող աղբյուրները):

[18] 2016 թվականի թիվ 3 օրենքի համաձայն՝ Իրաքի քաղաքացու «կացության կամ բնակության վայրը» այն վայրն է, որտեղ բնակվում է գործունակ անձը»: Բնակության վայրի ցանկացած փոփոխության մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ դա միայն ժամանակավոր նպատակով է, ընտանիքի գլուխը պետք է տեղեկացնի Բնակարանային տեղեկատվության գրասենյակին սովորաբար 30 օրվա ընթացքում: Տե՛ս Իրաք, Ազգային քարտի մասին 2016թ. թիվ (3) օրենք, 2016թ., www.refworld.org/docid/635673494.html, հոդված 10:

[19] 2021 թվականից ի վեր ներքին տեղահանվածները և այլ անձինք, որոնք ապրում են ոչ պաշտոնական վայրերում՝ Ալ-Անբար, Բաղդադ, Քիրքուկ, Նինվե և Սալահ Ալ-Դին նահանգների քաղաքային մասերում կամ արվարձաններում, վտարման մեծ սպառնալիքի տակ են: Օրինակ՝ 2022 թվականի սկզբին Բաղդադից հարավ-արևմուտք գտնվող Լատիֆիայի ոչ ֆորմալ բնակավայրերում բնակվող տեղահանվածներին հրահանգվել է ազատել տարածքները և տեղափոխվել այլ վայրեր: Ներքին տեղահանված անձինք բռնի ուժով չեն հեռացվել, և իշխանությունները ճկունություն են ցուցաբերել ժամկետների հարցում: Գրելու պահին մնացած 30 ներքին տեղահանված ընտանիքները աստիճանաբար լքեցին այդ վայրերը և տեղափոխվեցին մոտակա վայրեր, որտեղ ժամանակավոր ապաստարաններ կառուցեցին կառավարությանը պատկանող գյուղատնտեսական հողատարածքներում: Թեև իշխանությունները հանդուրժողականություն են ցուցաբերել նրանց ներկայության նկատմամբ, քանի որ նրանք չեն կարող վերադառնալ իրենց ծագման շրջան՝ Ջուրֆ Ալ-Սախր (Բաբիլի նահանգ), նրանք իրավաբանորեն պաշտպանված չեն ապագա վտարումից: 2022 թվականի մարտի կեսերին մոտ 300 տեղահանվածներ ոչ ֆորմալ բնակավայրերում, որոնք կառուցվել են կառավարական հողերի վրա կենտրոնական Քիրքուկ քաղաքի Ուրուբա և Մեմդոնա թաղամասերում և Քիրքուկի նահանգից հարավ գտնվող Չարդաղլի գյուղում, նույնպես վտարման վտանգի են ենթարկվել: Նրանք ստացել են վտարման ծանուցագրեր, որոնք ոստիկանությունը բնակիչներին ստիպել է ստորագրել՝ խոստանալով տարհանել թիրախավորված տները Բայրամի տոներից հետո (2022 թվականի մայիսի սկզբին): Գրելու պահին ընտանիքները չեն լքել վայրերը և մնում են վտարման վտանգի

- Ձեռք բերել/թարմացնել քաղաքացիական փաստաթղթեր,
- Օգտվել քվեարկելու իրավունքից,
- Կնքել վարձակալության պաշտոնական պայմանագրեր և գնել սեփականություն,
- Օգտվել աշխատելու իրավունքից, և
- Օգտվել հիմնական ծառայություններից, ինչպես օրինակ՝ առողջապահությունից, կրթությունից և պարենի չափաբաժիններից Հանրային բաշխման համակարգի (ՀԲՀ)[20] միջոցով:

Նոր բնակության վայրից տրված կացության քարտ չունենալու հետևանքները տարբեր են և մանրամասն կերպով ներկայացված են Բաժին III. Բ.3-ում և Բաժին IV-ում:

1) Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Կացության քարտը կանոնակարգվել է 1978 թվականի թիվ 95 օրենքով (Իրաքում կացության և բնակության վայրերի կազմակերպումը): Չնայած օրենքը ուժը կորցրած է ճանաչվել «Ազգային քարտերի մասին» օրենքով (2016թ. թիվ 3 օրենք), 1978թ.-ի թիվ 95 օրենքով սահմանված ցուցումները շարունակում են մնալ ուժի մեջ[21]: Կացության քարտը տրվում է տնային տնտեսության մակարդակով: Ընտանիքի/տնային տնտեսության գլուխները, որոնք արդեն ունեն իրենց անունով կացության քարտ՝ տրված Իրաքի ցանկացած վայրից, և ցանկանում են փոխել իրենց բնակության վայրը, պետք է փոխանցեն իրենց կացության քարտը նոր վայր: Ընտանիքի գլուխները, որոնք իրենց անունով կացության քարտ չունեն, քանի որ դեռևս ներառված են իրենց ընտանիքի հաշվառումներում, պետք է դիմեն նոր կացության քարտ ստանալու համար այն վայրում, որտեղ ցանկանում են բնակվել[22]: Երկու գործընթացի համար էլ

տակ: 2021 թվականի նոյեմբերին մոտ 15 հարկադիր կերպով վերաբնակեցված ընտանիքներ Ասայիշի կողմից վտարվեցին Էրբիլ քաղաքի քաղաքային շրջաններից՝ ԴԱԻՇ-ի հետ ենթադրվող առնչակցության պատճառով: Վտարումը հանգեցրեց նրանց տեղափոխմանը Նինվե: Սպառնալիքներ ստանալուց հետո առնվազն մեկ ընտանիք դիմել է Ասայիշին՝ պաշտպանություն ստանալու համար, ինչի արդյունքում, սակայն, Ասայիշն իրականացրել է անվտանգության ստուգում և հետագայում վտարել նրանց: ՄԱԿ ՓԳՀ-ի տեղեկատվություն, 2022թ. նոյեմբեր:

[20] «Չնայած տեխնիկապես քաղաքացիական կամ անձը հաստատող փաստաթուղթ չէ, կացության քարտը երբեմն պահանջվում է այլ փաստաթղթեր, այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթեր և Հանրային բաշխման համակարգի քարտ ձեռք բերելու համար: Այն պահանջվում է նաև վնասված և ոչնչացված զույգի փոխհատուցման սխեմաներից օգտվելու կամ այլ կերպ բնակարանի, հողի և սեփականության իրավունքների ճանաչում պահանջելու համար»: Փախստականների դանիական խորհուրդ և այլք, *Կյանքը լուսանցքում. հակամարտությունից հետո Իրաքի՝ փաստաթղթեր չունեցող անձանց կարիքների վերագնահատում*, 14 սեպտեմբերի 2022թ., https://bit.ly/3S7TeWU, էջ 12:

[21] Իրաք, 1978 թվականի թիվ 95 օրենք, Իրաքի տարածքում կացության և բնակության վայրերի կազմակերպում, 1978 թվականի դեկտեմբերի 6, www.refworld.org/docid/3ae6b4ec3c.html: 2016թ. թիվ 3 օրենքով սահմանված միասնական նույնականացման քարտը ի վերջո փոխարինելու է նաև կացության քարտին:

[22] Կացության քարտը տրվում է ընտանիքի գլխին: Միայնակ տղամարդիկ կամ կանայք սովորաբար ընդգրկված են իրենց հոր կացության քարտում, մինչև կամուսնանան: Ամուսնանալուց հետո տղամարդիկ կարող են ձեռք բերել իրենց սեփական կացության քարտը, մինչդեռ կանայք ներառվում են ամուսնու կացության քարտում: Միայնակ

(կացության քարտի փոխանցում կամ տրամադրում) ընտանիքի գլուխը պետք է բավարարի մի շարք վարչական և փաստաթղթային պահանջներ: Դրանք ամրագրված են Կացության քարտի վերաբերյալ Ներքին գործերի նախարարության ցուցումներում (2018 թ.): Գործնականում այս ցուցումների իրականացումը կարող է տարբեր լինել:

ա) Կացության քարտը նոր վայր փոխանցելու պահանջները

- Նախկին բնակության վայրի Բնակարանային տեղեկատվության գրասենյակի[23] թույլտվությունը՝ անձի հաշվառումը նոր բնակության վայր փոխանցելու և նախկին բնակության վայրում ապաակտիվացնելու վերաբերյալ[24]: Այս թույլտվությունը չի տրվում, եթե ընթանում է հետաքննություն կամ առկա է անձին կամ ընտանիքի որևէ անդամին ձերբակալելու մասին որոշում:
- Նոր բնակության վայրում մուխթարի (կամ տեղական ավագանու կամ քաղաքապետի)[25] կողմից ստորագրված և կնիքով հաստատված դիմումի ձևը, և
- Նոր վայրի համապատասխան անվտանգության դերակատար/ներ/ի կողմից տրված թույլտվությունը. սա սովորաբար Ներքին գործերի նախարարության հետախուզության վարչությունը (Դաշնային Իրաք) կամ Ասայիշն է (Իրաքի Քուրդիստան)[26]:

բ) Նոր վայրում առաջին անգամ կացության քարտ տրամադրելու պահանջները

տղամարդիկ և կանայք կարող են նաև իրենց անունով կացության քարտ ստանալ, եթե ինքնուրույն են ապրում իրենց պատկանող տարածքում (պահանջվում է սեփականության իրավունք): Միայնակ տղամարդիկ և կանայք, որոնք դեռ ընդգրկված են իրենց ընտանեկան հաշվառումներում, և որոնց համար հասանելի չէ ընտանիքի բնօրինակ կացության քարտը, սովորաբար չեն կարողանում նոր կացության քարտ ստանալ իրենց անունով (բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք ունեն սեփականություն նոր վայրում):

[23] Բնակարանային տեղեկատվության գրասենյակը (արաբերեն՝ maktab ma'aloumat,مكتب المعلومات) Ներքին գործերի նախարարության կազմում է:

[24] Հիմնականում այս հաստատումը ստանալու համար չի պահանջվում, որ անձը դիմի նախկին բնակության վայրի Բնակարանային տեղեկատվության գրասենյակ: Այնուամենայնիվ, Դոհուկի նահանգում բնակվել ցանկացող քրդերն ու եզդիները (այդ թվում՝ նրանք, ովքեր «վիճելի տարածքներից» են) պետք է սկսեն իրենց կացության քարտի փոխանցման գործընթացը անձամբ իրենց ծագման վայրում: Տես ստորև՝ Բաժին IV.Բ.1.բ: Նմանապես, Իրաքի Քուրդիստանի այլ մասերից եկած անձինք, որոնք ցանկանում են բնակվել Էրբիլի նահանգում, պետք է դիմեն իրենց ծագման վայրից կացության քարտը փոխանցելու համար, սակայն նրանք կարող են նաև լիազորագիր տալ այլ անձի: Տես ստորև՝ Բաժին IV.Բ.2.ա:

[25] Դիմումը ներկայացվում է տարածքի առաջին վարչական օղակ՝ սովորաբար մուխթարին, կամ, եթե չկա մուխթար, տեղական խորհուրդ: Որոշ գյուղական վայրերում առաջին վարչական օղակը կարող է լինել ենթաշրջանի կամ շրջանի քաղաքապետը:.

[26] Իրաքի Քուրդիստանում 18 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձի տրվում է Ասայիշի ծածկագիր՝ հաստատելու, որ նա ճանաչված է Ասայիշի Գլխավոր տնօրինության կողմից նոր վայրում: Տիրող քաղաքական, անվտանգության և վարչական բաժանումների պատճառով Ասայիշի ծածկագրերը տարբեր են լինում Իրաքի Քուրդիստանի տարբեր նահանգներում:

- Բնակության ապացույց կամ աջակցության նամակ՝ տրված մուխթարի (կամ տեղական խորհրդի կամ քաղաքապետի) կողմից, որը պատասխանատու է այն թաղամասի համար, որտեղ ընտանիքի գլուխը ցանկանում է բնակվել: Դիյալայում և հարավային նահանգներում բնակության ապացույցը կամ աջակցության փաստաթուղթը պետք է ստորագրված լինի մեկ հովանավորի կողմից, իսկ Բաղդադում՝ երկու հովանավորների կողմից, և վավերացված լինի քաղաքապետարանի կողմից: Դոհուկում և Սուլեյմանիայի նահանգում նույնպես պահանջվում է քաղաքապետարանի հաստատումը: Քիրքուկում հովանավորի կարիք չկա, փոխարենը պետք է ձեռք բերել ընտանիքի գլխի՝ նախկին բնակության վայրի բնակիչ այլևս չլինելը հաստատող նամակ, որը պետք է տրված լինի մուխթարի կամ տեղական խորհրդի կողմից և հաստատված լինի նախկին բնակության վայրի տեղական ոստիկանության կողմից, և
- Նոր վայրի համապատասխան անվտանգության դերակատար/ներ/ի կողմից տրված թույլտվությունը. սա սովորաբար Ներքին գործերի նախարարության հետախուզության վարչությունը (Դաշնային Իրաք) կամ Ասայիշն է (Իրաքի Քուրդիստան)[27]:

գ) Կացության քարտի փոխանցման/տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր

- Քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտի և քաղաքացիության վկայականի կամ միասնական նույնականացման քարտի բնօրինակ ընտանիքի բոլոր անդամների համար.
- Տեղական ոստիկանության բաժնի կողմից տրված հաստատման նամակ.
- Կացության քարտի բնօրինակ կամ, առաջին անգամ տրվելու դեպքում, կացության քարտի պատճենը, որում ներառված է անձի անունը (օրինակ՝ հոր կացության քարտը).
- Ամուսնական պայմանագիր՝ առաջին անգամ տրվելու դեպքում.
- Վարձակալության պայմանագիր կամ տան սեփականության վկայական նոր վայրից, և

[27] Գործընթացի շրջանակում Մոսուլ քաղաքում անվտանգության ստուգում չի պահանջվում, քանի որ նախքան Մոսուլ քաղաք տեղափոխվելը պետք է անվտանգության ստուգում անցնել Նինվեի հետախուզության և հակաահաբեկչության տնօրինության կողմից: Տես ստորև՝ Բաժին IV.Ա.4.ա:

- Երբեմն պահանջվում են նաև այլ փաստաթղթեր, ինչպիսիք են Հանրային բաշխման համակարգի քարտը[28]:

Բոլոր պայմանները բավարարելու դեպքում կացության քարտը սովորաբար փոխանցվում կամ տրվում է 10-ից 14 օրվա ընթացքում: Նախկինում ԴԱԻՇ-ի վերահսկողության տակ գտնվող կամ հակամարտությունից տուժած շրջաններից միայնակ տղամարդիկ, հատկապես՝ սուննի արաբները և սուննի թուրքմենները, կարող են ենթարկվել լրացուցիչ ստուգման, և, հետևաբար, գործընթացը կարող է ավելի երկար տևել:

Կացության քարտի փոխանցման/տրամադրման ընդհանուր արժեքը, ներառյալ տորքերը (5000 իրաքյան դինար), դրոշմակնիքների, պատճենների վճարները և այլ ծախսերը, կարող է հասնել մինչև 20000 իրաքյան դինարի:

2) Կացության քարտի փոխանցման/ձեռքբերման խոչընդոտները

Անձինք, որոնք չունեն անձը հաստատող պահանջվող փաստաթղթերը, դժվարությունների կհանդիպեն թե՛ իրենց կացության քարտը նախկին բնակության վայրից նոր բնակության վայր փոխանցելու, թե՛ նոր բնակության վայրում նոր կացության քարտ ձեռք բերելու հարցում: Կորցրած կամ վավերականության ժամկետը լրացած անձը հաստատող փաստաթղթերի վերաթողարկման համար հիմնականում պահանջվում է, որ անձը վերադառնա իր ծագման վայր[29]: Նմանապես, որոշ տարածքներում կացության քարտի փոխանցման համար ինքնին պահանջվում է, որ ընտանիքի գլուխը վերադառնա իր ծագման վայր (օրինակ՝ ծագումով ոչ Իրաքի Քուրդիստանից եզդիները և քրդերը, որոնք ցանկանում են իրենց կացության քարտը տեղափոխել Դոհուկի նահանգ):

Անվտանգության ստուգում անցնելու պահանջը կարող է խոչընդոտ հանդիսանալ այն անձանց համար, որոնք հետախուզվում են ԴԱԻՇ-ի հետ իրենց կամ իրենց ընտանիքի անդամների ենթադրյալ կապի պատճառով՝ լայն և խտրական պրոֆիլավորման

[28] Հանրային բաշխման համակարգի քարտը տնային տնտեսության մակարդակի քաղաքացիական փաստաթուղթ է: Այն տրվում է Առևտրի նախարարության կողմից, որը հնարավորություն է տալիս իրաքցի և ոչ իրաքցի քաղաքացիներին, ովքեր կացության թույլտվություն ունեն, ստանալ սննդի չափաբաժիններ:
[29] Տես վերը՝ Ծանոթագրություն 14-ը:

հիման վրա[30]: Անձինք կարող են չանցնել անվտանգության ստուգումը նաև իրենց ազգանվան և հետախուզման մեջ գտնվող անձի ազգանվան նմանության հիման վրա[31]: Միայնակ տղամարդիկ և կանայք, որոնք դեռ ներառված են իրենց հոր կացության քարտում, սովորաբար չեն կարողանում փոխանցել կացության քարտը նոր վայր, ինչպես նաև չեն կարող նոր կացության քարտ ստանալ իրենց անունով (բացառությամբ այն դեպքերի, եթե ունեն սեփականություն նոր վայրում)[32]:

Քիրքուկ քաղաքում կացության քարտի տեղափոխումն ընդհանրապես չի թույլատրվում՝ հաշվի առնելով քաղաքի վիճելի կարգավիճակը: Իրաքի Քուրդիստանում հատուկ բնութագրի/ծագման վայրի անձանց չի թույլատրվում փոխանցել իրենց կացության քարտը կամ ձեռք բերել նոր կացության քարտ (օրինակ՝ Իրաքի Քուրդիստանից դուրս գտնվող շրջաններից արաբները և էթնիկ/կրոնական փոքրամասնությունների անդամները չեն կարող փոխանցել իրենց կացության քարտը Դոհուկի և Էրբիլի նահանգներ):

3) Նոր վայրում տրված կացության քարտ չունենալու հետևանքները

Նրանք, ովքեր չեն կարողանում փոխանցել իրենց կացության քարտը կամ ձեռք բերել կացության քարտ նոր վայրում, **սովորաբար չեն կարող լիարժեք կերպով օգտվել հիմնական ծառայություններից և իրավունքներից՝ կախված տարածքից**:

[30] «Բազմաթիվ ներքին տեղահանված և վերադարձած անձինք ենթարկվում են կամ ենթարկվել են քաղաքացիական իշխանությունների, զինված և անվտանգության մարմինների, ինչպես նաև համայնքի անդամների մեղադրանքներին, հաճախ առանց պաշտոնապես առաջադրված քրեական մեղադրանքի կամ ապացույցների, առ այն, որ նրանք և/կամ նրանց ընտանիքի անդամները կապված են ծայրահեղական խմբերի հետ»: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության զեկույց. Ինքնության և քաղաքացիական փաստաթղթերի իրավունք, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջ 7: Անձը կարող է ընդգրկվել անվտանգության տարբեր դերակատարների «հետախուզվողների ցուցակներում» նաև վիճելի ապացույցների հիման վրա, ինչպիսիք են գաղտնի տեղեկատուների հայտարարությունները կամ անձնական վեճերը լուծելու նպատակով արված կեղծ մեղադրանքները: «Իրաքյան իշխանությունները, օրինակ, շարունակում են ապավինել ԴԱԻՇ-ի նախկին անդամների և համախոհների մասին գաղտնի տեղեկատուների կողմից տրամադրվող չստուգված տեղեկատվությանը: Լրատվամիջոցների և «Հյումըն Ռայթս Վոթչի»/Human Rights Watch/ զեկույցները ցույց են տվել, որ որոշ բնակիչներ և ընտանիքներ չարաշահել են այն փաստը, որ անվտանգության ուժերը ապավինում են տեղեկատուների՝ հաճախ չհիմնավորված մեղադրանքներին, որպեսզի լուծեն իրենց անձնական և ընտանեկան վեճերը»: Հյումըն Ռայթս Վոթչ /Human Rights Watch (HRW)/, *Կոտորածի հետաքննություն. Իրաքը պետք է քննի արմատական պատճառները*, 19 հունվարի 2022թ., https://bit.ly/3elxd8M:

[31] Եվրամիջերկրածովյան մարդու իրավունքների մոնիթորինգ, Իրաք. Կասկածյալների անուններին նման անուններ ունենալու համար անձանց նկատմամբ իրականացված խախտումները բացահայտում են ողբալի անփութությունը, 14 փետրվարի 2022թ., https://bit.ly/3AJ2xpR:

[32] Տե՛ս վերը՝ Ծանոթագրություն 22-ը: Նրանք կարող են օգտագործել ընտանիքի կացության քարտը վարչական գործընթացների համար նոր վայրում, եթե ունեն կացության քարտի բնօրինակը (պատճենը չի ընդունվում):

Իրավունքների և հիմնական ծառայությունների հասանելիության վերաբերյալ լրացուցիչ մանրամասները՝ ըստ տարածքների, ներառված են Բաժին IV-ում:

Անձինք, որոնք չունեն նոր վայրում տրված կացության քարտ, սովորաբար պետք է վերադառնան իրենց ծագման վայր՝ քաղաքացիական փաստաթղթեր ձեռք բերելու կամ թարմացնելու համար[33]: Անձինք, որոնք չեն կարողանում վերադառնալ իրենց ծագման տարածք, այդ թվում՝ հետապնդման վախի կամ անցակետերն անցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով, կարող են քաղաքացիական փաստաթղթերը ստանալու կամ թարմացնելու հնարավորություն չունենալ[34]: Վավերական փաստաթղթերի բացակայությունն իր հերթին սահմանափակում է ազատ տեղաշարժվելու, հիմնական ծառայություններից[35]

[33] Եթե անձը չի փոխանցում իր կացության քարտը բնակության նոր վայր, քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտի/միասնական նույնականացման քարտի (կամ դրանց վավերականության ժամկետի երկարաձգման) և Իրաքի քաղաքացիության վկայականի համար նրանց դիմումները պետք է անձամբ ներկայացվեն նրանց ծագման տարածքի Քաղաքացիական գործերի տնօրինություն (ՔԳՏ): Տե՛ս վերը՝ Ծանոթագրություն 14-ը:

[34] Ծագման տարածքում անձամբ ներկա գտնվելու պահանջի բավարարումը մասամբ իրականացվում է Ներքին գործերի նախարարության և Քաղաքացիական գործերի տնօրինությունների կողմից իրականացվող ժամանակավոր շարժական առաքելությունների միջոցով՝ ճամբարներում և որոշ ոչ պաշտոնական վայրերում/քաղաքային տարածքներում տեղահանվածների հետ կապվելու համար: Այնուամենայնիվ, նման առաքելությունները հասանելի չեն բոլոր նրանց համար, ովքեր քաղաքացիական փաստաթղթերի ձեռքբերման կամ թարմացման կարիք ունեն: 2021 թվականին ավելի քան 46,000 քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտեր, քաղաքացիության վկայականներ և Հանրային բաշխման համակարգի քարտեր են տրամադրվել շարժական առաքելությունների միջոցով 20 ճամբարներում, վեց քաղաքային վայրերում և չորս ոչ պաշտոնական վայրերում Էրբիլի, Ալ-Անբարի, Նինվեի և Դոհուկի նահանգներում: ՄԱԿ ՓԳՀ, Իրաք. Քաղաքացիական և ինքնության փաստաթղթեր – 2021թ., 26 ապրիլի 2022թ., https://bit.ly/3wzB1c6, էջ 3: 2022 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն նպատակ ունի աջակցելու 100,000 փաստաթղթերի տրամադրմանը: 2021 թվականի հունվար-հունիս ամիսներին տրվել է ավելի քան 24,300 փաստաթուղթ: ՄԱԿ ՓԳՀ, Քաղաքացիական փաստաթղթերի հասանելիություն ՆՏԱ-ների և վերադարձած ՆՏԱ-ների համար Իրաքում. 2022 – 2023թթ., 24 օգոստոսի 2022թ., https://bit.ly/3CFTW86, էջ 2:

[35] «Քաղաքացիական փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորությանը, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և սոցիալական ապահովության նպաստները, ինչպես նաև կարող է հանգեցնել ազատ տեղաշարժի, ձերբակալման և կալանավորման ռիսկերի, վերականգնման և/կամ վերակառուցման ծրագրերից դուրս մնալուն և թույլ չտալ մասնակցելու երկրի հասարակական գործերին»: ՄԱԿ ՓԳՀ, Քաղաքացիական փաստաթղթերի հասանելիություն ներքին տեղահանված անձանց և վերադարձած ներքին տեղահանված անձանց համար Իրաքում. 2022 – 2023թթ., 24 օգոստոսի 2022թ., https://bit.ly/3CFTW86, էջ 1: Օրինակ՝ «Բժշկական հաստատությունները հաճախ պահանջում են անձը հաստատող փաստաթղթերի որոշակի ձևեր՝ սովորական պատվաստում և առողջապահական ծառայություններ տրամադրելու համար: Առողջապահության խումբը հայտնում է, որ չնայած միշտ չէ, որ առողջության առաջնային պահպանման կենտրոններում (ԱԱՊԿ) ամբուլատոր բուժման համար կարող են անհրաժեշտ լինել անձը հաստատող փաստաթղթեր, դրանք սովորաբար պահանջվում են հիվանդանոցներ ընդունվելու համար: Նույն կերպ անձը հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող երեխաներին հաճախ արգելում են հաշվառվել Կրթության նախարարության վերահսկողության ներքո գտնվող դպրոցներում (...): Ի վերջո, սոցիալական պաշտպանության տարբեր սխեմաներից օգտվելու համար, ինչպիսին է Հանրային բաշխման համակարգը (ՀԲՀ) (այն դեպքում, երբ Հանրային բաշխման համակարգի քարտը ինքնին հիմնական քաղաքացիական փաստաթուղթ է), նույնպես պահանջվում է ունենալ անձը հաստատող վավերական փաստաթուղթ»: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության զեկույց. Ինքնության իրավունք և քաղաքացիական փաստաթղթավորում, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջ 12-13: Տես նաև՝ ՄԱԿ ՓԳՀ, Իրաք. Ինքնության և քաղաքացիական փաստաթղթերի իրավունք – 2021թ., 26 ապրիլի 2022թ., https://bit.ly/3wzB1c6, էջ 1, Հումանիտար գործերի

օգտվելու և այլ տեսակի փաստաթղթեր[36] ձեռք բերելու նրանց կարողությունը: Վավերական փաստաթղթերի բացակայությունը նաև անձանց ձերբակալման և կալանավորման վտանգի տակ է դնում անցակետերում կամ անվտանգության ռեյդերի ժամանակ[37]:

Անձինք, որոնք չունեն նոր վայրում տրված կացության քարտ, սովորաբար նույնպես չեն կարողանա փոխանցել Հանրային բաշխման համակարգի իրենց հաշվառումը և, հետևաբար, պետք է վերադառնան իրենց ծագման վայր՝ Հանրային բաշխման համակարգի միջոցով պարենի չափաբաժիններ ստանալու համար:

IV. Բնակության վերաբերյալ նահանգային պահանջները

Այս գլխում լրացուցիչ մանրամասներ են ներկայացված նոր վայրում կացությունը ժամանակավորապես օրինականացնելու և մշտական բնակություն հաստատելու պահանջների վերաբերյալ՝ կացության քարտը փոխանցելու կամ նոր վայրում նոր կացության քարտ տրամադրելու միջոցով: Այստեղ նաև նկարագրված են նահանգի մակարդակով հիմնական ծառայությունների և իրավունքների հասանելիության սահմանափակումները:

Ա. Կենտրոնական և Հարավային Իրաք

1) Բաղդադի նահանգ

ա) Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Այն անձանց համար, որոնք ծագումով Բաղդադի նահանգից չեն, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, պահանջվում են երկու հովանավորներ այն

համակարգման գրասենյակ, Հումանիտար կարիքների 2022թ. ուսումնասիրություն. Իրաք, 27 մարտի 2022թ., https://bit.ly/3qPutUV, էջ 49:

[36] «Մի փաստաթուղթ ունենալը հաճախ մեկ այլ անձը հաստատող կամ քաղաքացիական փաստաթղթի (վերա)տրամադրման պահանջ է». ՄԱԿ ՓԳՀ, Իրաք. Քաղաքացիական և ինքնությունը հաստատող փաստաթղթեր – 2021թ., 26 ապրիլի 2022թ., https://bit.ly/3wzB1c6, էջ 2. «Օրինակ, քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտ ստանալու համար անձից պահանջվում է ներկայացնել իր Իրաքի քաղաքացիության վկայականը և, հակառակը, այդպիսով այն անձինք, որոնք կորցրել են այս փաստաթղթերից մեկը կամ երկուսը, չեն կարող դիմել և ստանալ անձը հաստատող փաստաթղթեր»: Ավելին, անձը հաստատող փաստաթղթերը պարտադիր են քաղաքացիական փաստաթղթերի տրամադրման համար, ինչպիսիք են ծննդյան, մահվան կամ ամուսնության վկայականները: Պաշտպանության խումբ, Պաշտպանության վերլուծության զեկույց. Ինքնության իրավունք և քաղաքացիական փաստաթղթեր, 31 հոկտեմբերի 2021թ., https://bit.ly/3wifaa4, էջ 4, 5:

[37] Տես վերը՝ Ծանոթագրություն 8:

թաղամասից, որտեղ նրանք մտադիր են բնակվել, ինչպես նաև աջակցության նամակ մուխթարից (կամ տեղական խորհրդից կամ քաղաքապետից)[38]: Երկու հովանավորները պետք է անձին ուղեկցեն մուխթարի մոտ (կամ տեղական խորհուրդ կամ քաղաքապետի մոտ): Աջակցության նամակի տրամադրման համար նախատեսված է փոքր վճար՝ մոտ 2000-ից 5000 իրաքյան դինար՝ կախված մուխթարից: Աջակցության նամակը վավերականության սահմանված ժամկետ չունի և երկարաձգման կարիք չունի:

Ընդհանրապես, երկու հովանավոր ունենալը, համապատասխան վարչական մարմնից (մուխթար, տեղական խորհուրդ կամ քաղաքապետ) աջակցության նամակ ստանալը, ինչպես նաև անվտանգության շահագրգիռ դերակատարների կողմից անվտանգության թույլտվություն ձեռք բերելը բավարար է Բաղդադում կացությունը օրինականացնելու, բնակարան վարձելու և աշխատանք գտնելու համար: Այս փաստաթղթերը նաև բավարար են պետական և մասնավոր հիվանդանոցներից (բայց ոչ թաղամասային պետական բժշկական կենտրոններից) օգտվելու, ինչպես նաև բարձրագույն կրթության հասանելիության համար (տարրական և միջնակարգ կրթության համար սովորաբար պահանջվում է Բաղդադում տրված կացության քարտ):

բ) Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Իրավունքների և հիմնական ծառայությունների ողջ շրջանակից օգտվելու համար անհատը/ընտանիքը պետք է կա՛մ փոխանցի կացության քարտը նախորդ վայրից Բաղդադի նոր վայր, կա՛մ ձեռք բերի նոր կացության քարտ այն վայրում, որտեղ ցանկանում է բնակություն հաստատել Բաղդադում:

Կացության քարտը փոխանցելուց կամ տրվելուց հետո անհատը/ընտանիքը կարող է լիարժեք կերպով օգտվել հիմնական ծառայություններից, այդ թվում՝ առաջնային բուժօգնությունից, որը տրամադրվում է թաղամասային պետական բժշկական կենտրոններում (այդ թվում՝ երեխաների համար պարտադիր պատվաստումները): Հասանելի է նաև տարրական և միջնակարգ դպրոցներից օգտվելու հնարավորությունը, և նրանք կարող են պահանջել Հանրային բաշխման համակարգի իրենց հաշվառումը տեղափոխել նոր բնակության վայր: Ավելին, նրանք կարող են իրենց քաղաքացիական կարգավիճակի մասին գրառումները փոխանցել Բաղդադ և հետագայում ստանալ/թարմացնել քաղաքացիական կարգավիճակի

[38] Հաշվառումը կատարվում է առաջին վարչական օղակում՝ սովորաբար մուխթարի մոտ, կամ, եթե չկա մուխթար, տեղական խորհրդում: Որոշ գյուղական վայրերում առաջին վարչական օղակը կարող է լինել ենթաշրջանի կամ շրջանի քաղաքապետը:

նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը նոր բնակության վայրում:

2) Դիյալայի նահանգ

ա) Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Անձանց, որոնք ծագումով Դիյալայի նահանգից չեն, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, հարկավոր է հովանավոր այն թաղամասից, որտեղ նրանք մտադիր են բնակվել, ինչպես նաև աջակցության նամակ մուխթարից (կամ տեղական խորհրդից կամ ենթաշրջանի/շրջանի քաղաքապետից): Հովանավորը պետք է անձին ուղեկցի մուխթարի մոտ (կամ տեղական խորհուրդ կամ քաղաքապետի մոտ): Աջակցության նամակը վավերականության սահմանված ժամկետ չունի և երկարաձգման կարիք չունի:

Նրանց, ովքեր ցանկանում են բնակվել հյուսիսային Մուքդադիայի շրջանի և Խանաքինի շրջանի Սաադիյա ենթաշրջանի գյուղերում, ինչպես նաև Խալիս շրջանի Ալ-Ուդհիմ ենթաշրջանի հյուսիսում գտնվող գյուղերում, հարկավոր են աջակցության նամակներ երեք տարբեր վարչական և անվտանգության մարմիններից, մասնավորապես՝ տեղական մուխթարի գրասենյակից (կամ տեղական խորհրդից կամ քաղաքապետից), Ազգային անվտանգությունից և Իրաքի ազգային հետախուզական ծառայությունից (ԻԱՀԾ):

բ) Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Կացության քարտի փոխանցման կամ տրամադրման, ինչպես նաև իրավունքների և հիմնական ծառայությունների հասանելիության կապակցությամբ կիրառվում են նույն պահանջները, որոնք գործում են Բաղդադի համար[39]: Միակ տարբերությունն այն է, որ Դիյալայի Մուքդադիա շրջանում հարկավոր է հաստատման նամակ բանակից և Ժողովրդական մոբիլիզացիայի ուժերից (ԺՄՈՒ)՝ Ոստիկանության բաժնի կողմից տրված հաստատման նամակի փոխարեն:

[39] Տես վերը՝ Բաժին IV.Ա.1 («Բաղդադի նահանգ»):

3) Քիրքուկ քաղաք

ա) Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Անձանց, որոնք ծագումով Քիրքուկ քաղաքից չեն, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, հարկավոր է աջակցության նամակ մուխթարից (կամ տեղական խորհուրդից) այն թաղամասում, որտեղ նրանք մտադիր են բնակվել: Աջակցության նամակը պետք է ներկայացվի մոտակա ոստիկանության բաժին և ստուգված ու կնքված լինի այդ թաղամասի Ներքին գործերի նախարարության հետախուզության վարչության կողմից: Աջակցության նամակը պարունակում է ընտանիքի այն բոլոր անդամների հիմնական կենսատվյալները, որոնք ցանկանում են բնակվել Քիրքուկում: Աջակցության նամակն անվճար է. ինչևէ, փոքր վճար կարող է պահանջվել մուխթարի (կամ տեղական խորհրդի) կողմից: Աջակցության նամակը, որպես կանոն, ունի մեկ տարվա վավերականության ժամկետ (երբեմն միայն վեց ամիս՝ կախված մնալու նպատակից) և կարող է երկարաձգվել:

բ) Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Իրաքցիները, որոնք Իրաքի այլ շրջաններից են, սովորաբար չեն կարողանում իրենց կացության քարտը փոխանցել Քիրքուկ: Սա կապված է Քիրքուկի՝ Դաշնային կառավարության և Քուրդիստանի շրջանային կառավարության (ՔՇԿ) միջև վիճելի տարածքի հատուկ կարգավիճակի, ինչպես նաև 2017 թվականի հոկտեմբերին Քիրքուկի անկախության հանրաքվեից հետո դաշնային իշխանությունների կողմից քաղաքի կառավարումը ստանձնելուց հետո շարունակվող ժամանակավոր վարչական գործընթացների հետ: Տարբերակներից մեկը կարող է լինել այն, որ ընտանիքի գլուխը չեղյալ համարի նախկին բնակության վայրում առկա կացության քարտը, այնուհետև դիմի նոր կացության քարտ ստանալու համար Քիրքուկում. սա երկար գործընթաց է, որի համար պահանջվում է, որ անհատն անձամբ վերադառնա իր ծագման վայր, որպեսզի կարողանա սկսել չեղարկումը (որևէ անձի լիազորում չի թույլատրվում): Ընտանիքի գլուխը պետք է հավաստող նամակ ստանա ծագման վայրում գտնվող մուխթարից (կամ տեղական խորհրդից), որը կհաստատի, որ նա այլևս չի բնակվում այդ տարածքում: Այնուհետև այս նամակը պետք է հաստատվի տեղական ոստիկանության կողմից: Դրանից հետո անձը կարող է օգտագործել այս հավաստող նամակը, որպեսզի Քիրքուկ քաղաքում նոր կացության քարտի տրամադրման գործընթաց սկսի:

Հաշվի առնելով Քիրքուկ քաղաքում նոր կացության քարտ ձեռք բերելու հետ կապված դժվարությունները, ծագումով Իրաքի այլ մասերից իրաքցիների մեծ մասը միայն աջակցության նամակ է ունենում Քիրքուկի մուխթարից (կամ տեղական խորհրդից):

Նրանք օգտվում են աշխատանքի իրավունքից[40] և հիմնական ծառայություններից, ինչպիսիք են կրթությունը և առողջապահությունը: Քանի որ կացության քարտը պարտադիր պայման է վարձակալության պաշտոնական պայմանագրերի համար (նոտարական վարձակալություն), նրանք կարող են կնքել միայն վարձակալության ոչ պաշտոնական պայմանագրեր, որոնք չեն ապահովում որևէ իրավական պաշտպանություն (օրինակ՝ վտարումից): Նրանք, ովքեր միայն տեղական մուխթարի կողմից (կամ տեղական խորհրդից) տրված աջակցության նամակ ունեն, երկարաժամկետ անվտանգություն չունեն Քիրքուկում մնալու համար, քանի որ նամակը ունի կարճատև վավերականության ժամկետ (6 կամ 12 ամիս) և ենթակա է թարմացման մուխթարի (կամ տեղական խորհրդի) և Ներքին գործերի նախարարության հետախուզության վարչության կողմից:

Անհատները, որոնք ծագումով Քիրքուկ քաղաքից չեն (նույնիսկ եթե նրանք բնակարան են ստացել Քիրքուկում) չեն կարող քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտ/միասնական նույնականացման քարտ ստանալ կամ թարմացնել այդ քարտը Քիրքուկ քաղաքում (փոխարենը նրանք պետք է վերադառնան ծագման վայր): Նրանք նաև չեն կարող փոխանցել իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը Քիրքուկ քաղաք և իրենց պարենի չափաբաժինները պետք է ստանան ծագման վայրում:

4) Մոսուլ քաղաք

ա) Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Անձինք, որոնք ծագումով Մոսուլ քաղաքից չեն և ցանկանում են բնակվել այնտեղ, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, պետք է անվտանգության ստուգում անցնեն համապատասխան անվտանգության ուժերի կողմից, հիմնականում՝ Նինվեի հետախուզության և հակաահաբեկչության տնօրինության կողմից, **նախքան** Մոսուլ քաղաք տեղափոխվելը[41]: Անվտանգության թույլտվության համար պետք է դիմել ծագման տարածքում: Հետևաբար, ներկայումս Իրաքից դուրս գտնվող անձինք կարող են անվտանգության թույլտվություն ստանալ Մոսուլում բնակվելու համար, միայն եթե նախ վերադառնան իրենց ծագման տարածք:

[40] Հանրային ոլորտի զգայուն պաշտոններում աշխատելու համար անհրաժեշտ է Քիրքուկում տրված կացության քարտ:

[41] Մինչև 2021 թվականը ԴԱԻՇ-ի ենթադրյալ անդամների ընտանիքի անդամներից պահանջվում էր նաև հրապարակային հայտարարություն անել՝ դատապարտելով ԴԱԻՇ-ի ենթադրյալ անդամ ազգականին և նրան մեղսագրվող հանցագործությունները («*տաբրեա*»):

Մոսուլ քաղաք տեղափոխվելու թույլտվություն ստացած իրաքցիներին հովանավոր հարկավոր չէ[42]: Այնուամենայնիվ, նրանք պետք է հաշվառվեն այն թաղամասի մուխթարի մոտ կամ տեղական խորհրդում, որտեղ ցանկանում են բնակվել: Այս հաշվառման գործընթացը պետք է կատարվի միայն մեկ անգամ և չի ներառում որևէ ծախս: Մոսուլում իրենց կացությունն օրինականացնելուց հետո նրանք կարող են բնակարան վարձել և աշխատանքի տեղավորվել: Նրանք նաև կարող են օգտվել պետական և մասնավոր հիվանդանոցներից (բայց ոչ թաղամասային պետական բժշկական կենտրոններից), ինչպես նաև կարող են ստանալ բարձրագույն կրթություն (նախնական և միջնակարգ կրթությունից օգտվելու համար սովորաբար պահանջվում է Մոսուլում տրված կացության քարտ):

բ) Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Վերոնշյալ բոլոր քայլերը կատարելուց հետո Մոսուլ քաղաքում հաստատվել ցանկացող անձինք պետք է դիմեն կացության քարտը Մոսուլ քաղաք փոխանցելու համար: Մոսուլ քաղաքում կացության քարտ ձեռք բերելու կամ փոխանցելու գործընթացը, ինչպես նաև իրավունքների և հիմնական ծառայությունների համապատասխան հասանելիությունը նույնն է, ինչ նկարագրված է Բաղդադի համար[43]: Հիմնական տարբերությունն այն է, որ գործընթացի շրջանակում անվտանգության թույլտվություն չի պահանջվում, քանի որ նախքան Մոսուլ քաղաք տեղափոխվելը այն անհրաժեշտ է լինում ձեռք բերել Նինվեի հետախուզության և հակաահաբեկչության տնօրինությունից:

5) Հարավային նահանգներ

ա) Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Անձանց, որոնք ծագումով այն նահանգից չեն, որտեղ մտադիր են բնակություն հաստատել, անկախ իրենց կրոնական/էթնիկ պատկանելությունից, հարկավոր են տեղական հովանավոր, ինչպես նաև տեղական մուխթարի կողմից (կամ տեղական խորհրդի կամ քաղաքապետի կողմից) տրված աջակցության նամակ՝ Բաբիլի, Բասրայի, Դհի-Քարի, Քերբալայի, Միսսանի, Մութաննայի, Նաջեֆի, Քադիսիայի և Վասսիթի նահանգներում օրինական բնակության համար: Հովանավորը պետք է անձին ուղեկցի մուխթարի մոտ (կամ տեղական խորհուրդ կամ քաղաքապետի մոտ):

[42] Հովանավոր է անհրաժեշտ խառը էթնիկական տարածքներում, այդ թվում՝ Թալ Աֆարի, Համդանիայի և Սինջարի շրջաններում:
[43] Տես վերը՝ Բաժին IV.Ա.1 («Բաղդադի նահանգ»):

Աջակցության նամակի տրամադրման համար պահանջվում է փոքր վճար՝ մոտ 2000-ից 5000 իրաքյան դինար՝ կախված մուխթարից:

Բացի այդ, նահանգային մակարդակով համապատասխան օպերատիվ հրամանատարությունը պետք է անվտանգության ստուգումն անցած լինելու մասին հատուկ թույլտվություն տրամադրի: Կարող է նաև պահանջվել անվտանգության թույլտվություն՝ տրված անվտանգության տեղական դերակատարների կողմից (օրինակ՝ Ժողովրդական մոբիլիզացիայի ուժեր):

բ) Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Ինչ վերաբերում է կացության քարտի տրամադրմանը կամ փոխանցմանը հարավային նահանգներից որևէ մեկում, ինչպես նաև իրավունքների և հիմնական ծառայությունների համապատասխան հասանելիությանը, կիրառվում է նույն գործընթացը, ինչ նկարագրված է Բաղդադի համար[44]:

Բ. Իրաքի Քուրդիստանի Շրջան (ԻՔՇ)

1) Դոհուկի նահանգ

ա) Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգից են

Իրաքի Քուրդիստանի ցանկացած այլ նահանգի իրաքցիները կարող են օգտվել հանրային կրթությունից և առողջապահական ծառայություններից Դոհուկի նահանգ մուտք գործելուց հետո: Նրանք կարող են նաև աշխատանքի տեղավորվել և բնակարան վարձել կամ գնել Դոհուկում: Այլ իրավունքներից և հիմնական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է, որ նրանք օրինականացնեն իրենց կացությունը Ասայիշի և տեղական մարմինների միջոցով և փոխանցեն իրենց կացության քարտը:

<u>Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում</u>

Առաջին 30 օրվա ընթացքում Դոհուկում մնալու համար Իրաքի Քուրդիստանի մեկ այլ նահանգի իրաքցիները պետք է «բնակության ապացույցի գրություն» ստանան այն թաղամասի մուխթարից, որտեղ նրանք մտադիր են բնակություն հաստատել: Բացի այդ, և՛ նահանգապետի գրասենյակը, և՛ Դոհուկի Ասայիշի գլխավոր տնօրինությունը,

[44] Նույն տեղում:

և՛ նախնական բնակության վայրի նահանգապետարանը համապատասխանաբար պետք է հաստատեն բնակության վայրի փոփոխությունը:

Կացության քարտի փոխանցումը և տրամադրումը

Իրաքի Քուրդիստանի մեկ այլ նահանգի իրաքցիները պարտավոր են կա՛մ փոխանցել իրենց կացության քարտը ծագման նահանգից Դոհուկի նահանգ, կա՛մ ստանալ նոր կացության քարտ:

Կացության քարտը փոխանցվելուն կամ տրվելուն պես անհատը/ընտանիքը կարող է դիմել, որպեսզի իրենց քաղաքացիական հաշվառումները փոխանցվեն Դոհուկ, և հետագայում ստանալ/թարմացնել քաղաքացիական կացության նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Դոհուկում: Նրանք կարող են նաև հայցել Հանրային բաշխման համակարգի քարտի փոխանցումը Դոհուկ:

բ) Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

Իրաքցիները, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն, իրավունք ունեն Դոհուկ մուտք գործելուց հետո տուն վարձել և կանոնավոր աշխատանք գտնել: Նրանք նաև ունեն հանրային առողջապահությունից և կրթությունից օգտվելու իրավունք: Այլ իրավունքներից և հիմնական ծառայություններից օգտվելու համար պահանջվում է, որ նրանք օրինականացնեն իրենց կացությունը Ասայիշի և տեղական մարմինների միջոցով և փոխանցեն կամ ձեռք բերեն կացության քարտ Դոհուկում:

Բնակության թույլտվության տրամադրումը[45]

Անհատները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից դուրս գտնվող նահանգներից են և ցանկանում են մնալ Դոհուկի նահանգում նախնական մեկամսյա ժամկետից հետո, պետք է դիմեն Ասայիշի տեղական գրասենյակ այն թաղամասում, որտեղ նրանք ցանկանում են բնակվել: Նրանց պետք է ուղեկցի հովանավոր Դոհուկի նահանգից, և նրանք պետք է դիմեն Ասայիշին՝ բնակության թույլտվություն ստանալու համար: Կանոնավոր աշխատանքային պայմանագիր ունեցող անձանց համար գործատուն կարող է հանդես գալ որպես հովանավոր: Գործատուն սովորաբար պետք է աշխատանքի պայմանագիրը ներկայացնի Ասայիշին: Բնակարան վարձակալողների դեպքում հովանավոր ներկայացնելու փոխարեն վարձակալության պայմանագիրը կարող է ներկայացվել: Հաստատվելու դեպքում նրանց կտրամադրվի Ասայիշի կողմից

[45] Իրաքի Քուրդիստանում այս թույլտվությունը սովորաբար կոչվում է «բնակության թույլտվություն», սակայն այն Ասայիշի կողմից տրված անվտանգության թույլտվություն է:

տրված բնակության թույլտվություն, որն ուժի մեջ է մինչև վեց ամիս՝ կախված մնալու նպատակից[46]:

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Քրդերին և եզդիներին, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն (այդ թվում՝ «վիճելի տարածքներից» են), թույլատրվում է կացության քարտը փոխանցել Դոհուկի նահանգ: Դրա համար նրանք նախ պետք է չեղարկեն կացության քարտը ծագման վայրում, որը պետք է կատարվի անձամբ (չի թույլատրվում որևէ անձի լիազորում): Անձը կացության քարտի չեղարկումը հաստատող նամակ է ստանում:

Առաջին անգամ կացության քարտ տրամադրելու գործընթացը նույնն է, ինչ վերը նկարագրված է «*Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգից են*» բաժնում, բացառությամբ նրա, որ անձին անհրաժեշտ կլինի նաև Ասայիշի ծածկագիր՝ տրված Դոհուկում Ասայիշի Գլխավոր տնօրինության կողմից:

Կացության քարտը փոխանցելուն կամ ստանալուն պես քրդերը կամ եզդիները կարող են օգտվել հիմնական ծառայություններից: Այնուամենայնիվ, նրանք չեն կարող ձեռք բերել/թարմացնել իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Դոհուկում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման շրջան) և չեն կարող պահանջել, որ իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը փոխանցվի Դոհուկ[47]:

Իրաքի Քուրդիստանից դուրս գտնվող տարածքներից՝ այլ բնութագիր ունեցող անձինք (այդ թվում՝ արաբները, թուրքմենները, քրիստոնյաները, շաբակները, կակաիները, սաբայան-մանդայանները և այլն) չեն կարող իրենց բնակության քարտը փոխանցել Դոհուկի նահանգ: Բացի այդ, նրանք չեն կարող ձեռք բերել/թարմացնել իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Դոհուկի նահանգում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման շրջան), ինչպես նաև չեն կարող իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը փոխանցել Դոհուկ: Այնուամենայնիվ, նրանք իրավունք

[46] Օրինակ՝ բուժման կամ աշխատանքային նպատակով Դոհուկ այցելող անձանց տրվում է թույլտվություն, որն ուժի մեջ է ընդամենը մի քանի շաբաթով: Նրանք, ովքեր օրինական հիմքեր ունեն երկարաժամկետ մնալու համար, կարող են պահանջել 6-ամսյա կացության թույլտվություն: Սա վերաբերում է նաև այն անձանց, որոնք ունեն աշխատանքի կամ վարձակալության պայմանագիր, որը վավեր է վեց ամիս և ավելի ժամկետով:

[47] Սինջար շրջանի (Նինվեի նահանգ) եզդիներն ու քրդերը կարող են իրենց սննդի չափաբաժինները ստանալ Դոհուկում՝ Առևտրի նախարարության հետ ներքին պայմանավորվածության հիման վրա, եթե նրանք գրանցված են որպես «Ներքին տեղահանված անձ» քաղաքապետարանում և Միգրացիայի և ճգնաժամային արձագանքման վարչությունում, և դա հաստատված է Ասայիշի կողմից:

ունեն օգտվելու հիմնական ծառայություններից, ինչպես օրինակ՝ կրթությունից և առողջապահական ծառայություններից:

2) Էրբիլի նահանգ

ա) Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգից են

Իրաքի Քուրդիստանի ցանկացած նահանգի իրաքցիներն ունեն հիմնական ծառայությունների, ինչպես օրինակ՝ առողջապահության և կրթության հասանելիություն, ինչպես նաև ունեն աշխատանքի իրավունք և կարող են բնակարան վարձել Էրբիլում: Նրանցից պահանջվում է օրինականացնել իրենց կացությունը Ասայիշի և տեղական իշխանությունների միջոցով:

<u>Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում</u>

Իրաքցիները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են և ցանկանում են բնակություն հաստատել Էրբիլում, պետք է հաշվառվեն այն թաղամասի տեղական Ասայիշում, որտեղ նրանք ցանկանում են բնակվել (Էրբիլ միջազգային օդանավակայանով մուտք գործելուց հետո՝ 48 ժամվա ընթացքում, ցամաքով մուտք գործելուց հետո՝ 30 օրվա ընթացքում): Դրանից հետո նրանք պետք է հաշվառվեն թաղամասի մուխթարի մոտ:

<u>Կացության քարտի փոխանցումը և հաստատումը</u>

Իրաքցիները, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են, կարող են փոխանցել կացության քարտը Էրբիլ կամ Էրբիլում դիմել կացության քարտ ստանալու համար:

Կացության քարտը փոխանցվելուն կամ տրվելուն պես անձը/ընտանիքը կարող է ձեռք բերել/թարմացնել քաղաքացիական կացության նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Էրբիլում և դիմել, որ իրենց Հանրային բաշխման համակարգի հաշվառումը փոխանցվի Էրբիլ:

բ) Արաբներ ու թուրքմեններ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

Արաբներին և թուրքմեններին, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն և ունեն «Անվտանգության երաշխավորման քարտ» (որը նաև հայտնի է որպես «բնակության թույլտվություն»), թույլատրվում է տուն վարձել, կանոնավոր աշխատանք փնտրել և օգտվել հանրային առողջապահությունից և կրթությունից: Նրանք պետք է

օրինականացնեն իրենց կացությունը Ասայիշի միջոցով՝ երկարաձգելով «Անվտանգության երաշխավորման քարտի» վավերականության ժամկետը: Նրանք չեն կարող իրենց կացության քարտը փոխանցել ծագման նահանգից Էրբիլի նահանգ և, հետևաբար, չեն կարող օգտվել այլ իրավունքներից և հիմնական ծառայություններից:

«Անվտանգության երաշխավորման քարտի» վավերականության ժամկետի երկարաձգումը

«Անվտանգության երաշխավորման քարտի» վավերականության ժամկետի ընթացքում (48 ժամ կամ 30 օր, տես Բաժին II.Բ.2) արաբներն ու թուրքմենները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն և ցանկանում են բնակվել Էրբիլի նահանգում, պետք է դիմեն այն թաղամասի տեղական Ասայիշին, որտեղ ցանկանում են բնակվել, որպեսզի երկարաձգեն «Անվտանգության երաշխավորման քարտի» վավերականությունը[48]: Աշխատանքային կամ վարձակալության պայմանագիր չունեցողների «Անվտանգության երաշխավորման քարտի» վավերականության ժամկետը երկարաձգվում է ընդամենը 30 օրով, որից հետո նրանք կրկին պետք է դիմեն երկարաձգման:

Միայնակ արաբ և թուրքմեն տղամարդիկ և կանայք հիմնականում ստանում են ընդամենը մեկամսյա վավերականություն ունեցող, երկարաձգման ենթակա «Անվտանգության երաշխավորման քարտ»: Հաշվի առնելով կարճ վավերականության ժամկետը՝ նրանք սովորաբար բախվում են կանոնավոր աշխատանք գտնելու դժվարությունների հետ: Միայնակ արաբ և թուրքմեն տղամարդիկ, որոնք ունեն մշտական աշխատանքի ապացույց և իրենց գործատուի աջակցության նամակը, կարող են դիմել մեկ տարվա «Անվտանգության երաշխավորման քարտ» ստանալու համար, սակայն քիչ դիմումներ են բավարարվում:

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Իրաքի արաբներն ու թուրքմենները, նույնիսկ եթե ունեն «Անվտանգության երաշխավորման քարտ», որը վավեր է մեկ տարի ժամկետով, չեն կարող իրենց ծագման նահանգից կացության քարտը փոխանցել Էրբիլ կամ ձեռք բերել կացության քարտ Էրբիլում: Արդյունքում, նրանք չեն կարողանում փոխանցել իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը Էրբիլ, ինչպես նաև չեն կարողանում ստանալ/թարմացնել իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական

[48] Իրաքի Քուրդիստանում այս թույլտվությունը սովորաբար կոչվում է «բնակության քարտ», սակայն դա Ասայիշի կողմից տրված անվտանգության թույլտվություն է:

նույնականացման քարտը Էրբիլում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման տարածք):

գ) Քրիստոնյաներ, եզդիներ և այլ փոքրամասնությունների անդամներ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

Անվտանգության ստուգումը և հաշվառումը տեղական մարմիններում

Փոքրամասնությունների անդամներին, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն, թույլատրվում է բնակվել Էրբիլում՝ առանց «Անվտանգության երաշխավորման քարտ» ստանալու անհրաժեշտության: Այնուամենայնիվ, նրանք պետք է հաշվառվեն այն թաղամասի Ասայիշում, որտեղ ցանկանում են բնակվել: Դրանից հետո նրանք պետք է գրանցվեն թաղամասի մուխթարի մոտ:

Այս գործընթացով անցնելուց հետո նրանք չեն բախվում բնակարան վարձելու, կանոնավոր աշխատանքի ընդունվելու և հիմնական ծառայություններից, ինչպես օրինակ՝ առողջապահությունից և կրթությունից օգտվելու հետ կապված սահմանափակումների:

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Այս բնութագրով անձինք չեն կարող իրենց կացության քարտը իրենց ծագման նահանգից փոխանցել Էրբիլ կամ ստանալ նոր կացության քարտ Էրբիլում: Արդյունքում նրանք չեն կարող փոխանցել իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը Էրբիլ, ոչ էլ կարող են ձեռք բերել/թարմացնել իրենց քաղաքացիական կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Էրբիլում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման տարածք):

3) Սուլեյմանիայի նահանգ

Բոլոր իրաքցիները, անկախ իրենց ծագման վայրից և էթնիկ/կրոնական պատկանելությունից, Սուլեյմանիայի հանրային կրթության և առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեն: Կանոնավոր աշխատանքի իրավունքից օգտվելու, բնակարան վարձելու և այլ իրավունքներ և հիմնական ծառայություններ ստանալու համար նրանք պետք է օրինականացնեն իրենց կացությունը Ասայիշի միջոցով և փոխանցեն իրենց կացության քարտը՝ հետևելով ըստ ծագման վայրի, էթնիկ/կրոնական պատկանելության և ընտանեկան կարգավիճակի՝ տարբերվող պահանջներին, ինչպես սահմանված է ստորև:

ա) Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Իրաքցիները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանի այլ նահանգից են և ցանկանում են հաստատվել Սուլեյմանիայի նահանգում, անկախ իրենց էթնիկ/կրոնական ծագումից՝ պետք է հայցեն Ասայիշի նոր ծածկագիր[49] և կա՛մ փոխանցեն իրենց կացության քարտը ծագման նահանգից Սուլեյմանիայի նահանգ, կա՛մ ձեռք բերեն նոր կացության քարտ Սուլեյմանիայի նահանգում: Այս գործընթացը ներառում է հետևյալ քայլերը.

Մշտական բնակության իրավունք ստանալու գործընթացը ներառում է հարցազրույց Սուլեյմանիայի Գլխավոր Ասայիշի տնօրինության հետ: Այնուհետև անձին տրվում է Ասայիշի նոր ծածկագիր, որը հաստատում է, որ Գլխավոր Ասայիշը ճանաչում է անձին/ընտանիքին: Ասայիշի ծածկագրի հիման վրա անձը կարող է սկսել տան վարձակալության գործընթաց: Այնուամենայնիվ, նա պետք է փոխանցի կացության քարտը կամ ձեռք բերի նոր կացության քարտ, որպեսզի կարողանա վարձակալության պայմանագիր կնքել: Կացության քարտը փոխանցվելուն/տրամադրվելուն պես նրանք կարող են օգտվել կանոնավոր աշխատանքի իրավունքից, ինչպես նաև կարող են փոխանցել իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը: Այնուամենայնիվ, նրանք չեն կարող ձեռք բերել/թարմացնել իրենց քաղաքացիական կացության կարգավիճակի նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Սուլեյմանիայում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման վայր):

Միայնակ տղամարդիկ և կանայք բախվում են վարձակալության վայրերի և տեսակների հետ կապված սահմանափակումների հետ: Օրինակ՝ նրանց չի թույլատրվում բնակարան վարձակալել Սուլեյմանիա քաղաքի կենտրոնում, բացառությամբ այն դեպքերի, երբ բնակարանը բնակարանային համալիրի մաս է:

բ) Քրդեր և եզդիներ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Քրդական կամ եզդիական ծագում ունեցող անձանց համար, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից դուրս գտնվող նահանգներից են, կիրառվում է նույն գործընթացը, ինչ

[49] Ասայիշի ծածկագիրը տրամադրվում է 18 տարեկանից բարձր յուրաքանչյուր անձի: Տիրող քաղաքական, անվտանգության և վարչական բաժանումների պատճառով Ասայիշի ծածկագրերը տարբեր են լինում Իրաքի Քուրդիստանի տարբեր նահանգներում: Հետևաբար Էրբիլից, Դոհուկից կամ Հալաբջայից անձանց, որոնք ցանկանում են բնակություն հաստատել Սուլեյմանիայի նահանգում, անհրաժեշտ է Ասայիշի նոր ծածկագիր:

վերը նկարագրված է «*Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են*» բաժնում:

Սուլեյմանիայում կացության քարտ ստանալուց կամ կացության քարտը Սուլեյմանիա փոխանցվելուց հետո նրանք կարող են օգտվել կանոնավոր աշխատանքի իրավունքից և կարող են հայցել Հանրային բաշխման համակարգի քարտի փոխանցում Սուլեյմանիա (եթե նրանք ծագումով վիճելի տարածքներից չեն)[50]: Այնուամենայնիվ, նրանք իրավունք չունեն ստանալ/թարմացնել իրենց քաղաքացիական կացության նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Սուլեյմանիայում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման վայր):

Միայնակ տղամարդիկ և կանայք բախվում են վարձակալության տարածքների և տեսակների հետ կապված սահմանափակումների հետ (տե՛ս վերը՝ «*Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են*»):

գ) Արաբներ և թուրքմեններ, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն

<u>Արաբ և թուրքմեն ընտանիքներին բնակության թույլտվության տրամադրումը</u>[51]

Արաբ և թուրքմեն ընտանիքները, որոնք ծագումով Իրաքի Քուրդիստանից չեն, պետք է դիմեն այն թաղամասի տեղական Ասայիշին, որտեղ նրանք ցանկանում են բնակվել, որպեսզի ստանան բնակության քարտ («*Տեղեկատվական քարտ*»): Բնակության քարտը ունի մեկ տարվա վավերականության ժամկետ և կարող է երկարաձգվել: Նրանց համար հովանավոր հարկավոր չէ:

Մեկ տարվա բնակության քարտի հիման վրա արաբ և թուրքմեն ընտանիքները, որոնք Իրաքի Քուրդիստանից չեն, կարող են բնակարան վարձել և ունենալ չգրանցված աշխատանք (առանց պաշտոնական աշխատանքային պայմանագրի, հիմնականում՝ շինարարության և հյուրընկալության ոլորտներում):

[50] Քրդերն ու եզդիները, որոնք Քուրդիստանի շրջանային կառավարության և Դաշնային կառավարության միջև վիճելի տարածքներից են, չեն կարող դիմել փոխանցելու իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը. փոխարենը նրանք պետք է վերադառնան ծագման վայր՝ ամսական պարենային չափաբաժինները ստանալու համար: Հանրային բաշխման համակարգի քարտը կարող է թարմացվել Սուլեյմանիայում: Այնուամենայնիվ, նորածինների տվյալները կարող են ավելացվել՝ միայն ծագման վայր վերադառնալով:

[51] Իրաքի Քուրդիստանում այս թույլտվությունը սովորաբար կոչվում է «բնակության թույլտվություն», սակայն դա Ասայիշի կողմից տրված անվտանգության թույլտվություն է:

Կացության քարտի փոխանցումը կամ տրամադրումը

Ընտանիքները, որոնք ունեն մեկ տարվա բնակության քարտ, կարող են խնդրել իրենց կացության քարտը փոխանցել Սուլեյմանիա կամ ստանալ նոր կացության քարտ (անցնելով նույն գործընթացով, որը նկարագրված է վերը՝ «*Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են*» բաժնում): Կացության քարտը փոխանցվելուն կամ տրվելուն պես նրանք կարող են աշխատանքային պայմանագրի հիման վրա կանոնավոր աշխատանք ունենալ: Նրանք կարող են նաև դիմել, որ իրենց Հանրային բաշխման համակարգի քարտը փոխանցվի Սուլեյմանիա: Այնուամենայնիվ, նրանք իրավունք չունեն ձեռք բերելու/թարմացնելու իրենց քաղաքացիական կացության նույնականացման քարտը/միասնական նույնականացման քարտը Սուլեյմանիայում (փոխարենը նրանք պետք է վերադառնան իրենց ծագման վայրը):

Բնակության թույլտվության տրամադրումը արաբ և թուրքմեն միայնակ տղամարդկանց և կանանց

Միայնակ արաբ և թուրքմեն տղամարդիկ և կանայք սովորաբար ստանում են միայն մեկամսյա վավերականության ժամկետով, երկարաձգման ենթակա բնակության թույլտվություն: Բացառության կարգով, եթե նրանք կարողանում են գտնել կանոնավոր աշխատանք (աշխատանքային պայմանագրով) և աջակցության նամակ ներկայացնել իրենց ապագա գործատուից, նրանք Ասայիշից ստանում են երկարաձգման հնարավորությամբ մեկ տարվա բնակության քարտ: Գործնականում մեկամսյա բնակության քարտ ունեցողները բախվում են կանոնավոր աշխատանք գտնելու դժվարությունների՝ թույլտվության կարճ վավերականության պատճառով:

Միայնակ տղամարդիկ և կանայք բախվում են վարձակալության վայրերի և տեսակների հետ կապված սահմանափակումների (տես վերը՝ «*Իրաքցիներ, որոնք Իրաքի Քուրդիստանի այլ նահանգներից են*» բաժինը):